

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. ապրիլի 18-24-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Ապրիլի 20-ի ցերեկը շրջանների զգալի մասում, 21-ի գիշերն առանձին շրջաններում դիտվել է անձրև: Տեղումների քանակը կազմել 1-5մմ (Հրազդանում, Ֆոնտանում՝ 18-22մմ):

Օդի օրական միջին ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 3-6 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է՝ Սյունիքի հովիտներում՝ $+30...+31^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $+22...+23^{\circ}\text{C}$, Արմավիրում, Արարատում՝ $+26...+29^{\circ}\text{C}$, Վայոց ձորի նախալեռներում՝ $+27^{\circ}\text{C}$, լեռներում՝ $+19^{\circ}\text{C}$, Արագածոտնի նախալեռներում՝ $+22...+27^{\circ}\text{C}$, լեռներում՝ $+17...+20^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $+22...+24^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+20...+24^{\circ}\text{C}$, Կոտայքի նախալեռներում՝ $+24^{\circ}\text{C}$, լեռներում՝ $+20...+22^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+19...+24^{\circ}\text{C}$ (Աշոցք՝ $+18^{\circ}\text{C}$), Գեղարքունիքում՝ $+16...+21^{\circ}\text{C}$, Երևանում՝ $+26...+29^{\circ}\text{C}$:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է՝ Գեղարքունիքում՝ $-1...-4^{\circ}\text{C}$ (Գավառ՝ -9°C), Շիրակում $0...-2^{\circ}\text{C}$ (Աշոցք՝ -4°C), Արագածոտնի լեռներում՝ $0...-4^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $+1...+4^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+1...-3^{\circ}\text{C}$ (Տաշիր՝ -6°C), Սյունիքի հովիտներում՝ $+3^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ -4°C , Վայոց ձորի լեռներում՝ -2°C , նախալեռներում՝ $+3^{\circ}\text{C}$, Կոտայքի լեռներում՝ -2°C , նախալեռներում՝ $+4^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $-1...+4^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+2^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+4...+6^{\circ}\text{C}$, Երևանում՝ $+3...+6^{\circ}\text{C}$:

Ապրիլի 20-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում՝ 18-23 մ/վրկ (Իջևան՝ 30մ/վրկ):

Ապրիլի 25-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվում է միայն 2500մ-ից բարձր շրջաններում՝ Արագած բ/լ-ում կազմելով 159սմ:

Շաբաթվա ընթացքում եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբույսերի աճի, զարգացման և դաշտային աշխատանքներն իրականացնելու համար:

Լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենի բարձրությունը կազմել է 7-8սմ, սկսվել է գարնանացան գարու և կարտոֆիլի ցանքի աշխատանքները, պտղատուների բողբոջները ուռչել են:

Հովտային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի նախացանքային աշխատանքները և պտղատուների պտուղների ձևավորումը:

Ապրիլի 18-24-ը հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում (17.04.22-24.04.2022թթ. տարբերությունը) բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.49մ (24.04.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 23 սմ-ով: